



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK 16, N.Y.



MURRAY HILL 6-0710

ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ

Archbishop Sion Manougian, Primate

Թիւ 7057

Յունիս 27, 1963

Արժանաշնորհ
Տ. Բարզէն Աւագ ԹԿՆՅ. Մազսուտեան
Հոգեւոր Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
եւ Նախագահ Պատուարժան Միական Խորհուրդի
Ձէյմպլորիւն.

Սիրելի Տէր Բարզէն,

Ստացած ենք Համայնքիդ Տարեկան Անտրական Միական ժողովի Գիւ-
լանի Մայիս 25 թուակիր նամակը, ի մասին Ձեր Միական Խորհուրդի մաս-
նակի ընտրութեան, որ տեղի ունեցաւ Մայիս 15ի երեկոյեան եկեղեցւոյդ
մշակութային սրահին մէջ, մեր նախագահութեամբ եւ Թեմական Խորհուրդի
երկու անդամներու ներկայութեամբ:

Նկատի ունենալով որ Ձեր վերոյիշեալ Միական ժողովին մասնակ-
ցող 301 տրատու անդամներու քուէարկութեամբ տեղի ունեցաւ ընտրու-
թիւնը, այսու կը վաւերացնենք հետեւեալ ներք իբրեւ անգամ Միական
Խորհուրդին.

Տիարք՝ Մայքըլ Ազարեան
ճան Սուրսուրեան
Զօր. Մարգիս Զարգարեան
Խորէն Խուլիկեան
Փիթըր Կիւլիանեան
Փիթըր Ազամեան

Կը յանձնարարենք որ Ձեր եւ Միական Խորհուրդի ամփոփ տեղե-
կագիրները եւ տարեկան հաշուեկշիռը, ինչպէս նաեւ Միական Խորհուրդի
նոր դիւանի կազմի անուն-հասցէները Առաջնորդարան զրկէք փութով Ձե-
զի զրկուած տեղեկագրի հարցարանով միասին:

Օրհնելով Միական Խորհուրդի նոր կազմը՝ կը մաղթենք ձեզի
յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան շրջան մը, ի պայծառութիւն
Ս. Եկեղեցւոյդ եւ ի Հոգեւոր շինութիւն Համայնքիդ մեր սիրեցեալ
ժողովուրդին:

Մնամք Տիրուանդ սիրոյ ողջունիւ
Ազօթարար

ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանատայի